

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով
Ո Ր Ո Շ ՈՒ Մ 51/2
12 սեպտեմբերի 2017թ.

Քննարկվեց «ԱՐՄՏԵՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ ներկայացուցչի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Հետքացրողումային հսկողության վարչության 12.07.2017թ. արտագնա մաքսային ստուգման N 0015-Ա ակտի և դրանից բխող ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին որոշումների դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 12.06.2017թ. N0015 հանձնարարականի համաձայն «ԱՐՄՏԵՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև՝ ընկերություն) իրականացվել է արտապլանային արտագնա մաքսային ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Հետքացրողումային հսկողության վարչության 12.07.2017թ. արտագնա մաքսային ստուգման N 0015-Ա ակտը, որով լրացուցիչ վճարման է առաջադրվել ընդամենը 59.613.350 դրամ:

Նշվեց նաև, որ ընկերության կողմից առանձնապես խոշոր չափերով հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով 10.08.2017թ. հարուցվել է թիվ 83167717 քրեական գործը, որի շրջանակներում ՀՀ քննչական վարչությունում կատարվում է նախաքննություն:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը:

Քննարկվող դեպքում, հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել և քննվում է թիվ 83167717 քրեական գործը, հետևապես անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

«ԱՐՄՏԵՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ ներկայացուցչի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել արտակազմի միասնական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ